ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ-3

ՀՀ քննչական կոմիտեի կարիքների համար գնումների ARMEPS էլեկտրոնային համակարգի միջոցով ավտոմեքենաների անիվների ձեռքբերման նպատակով ձևավորված «ՀՀՔԿԴ-ԳՀԱՊՁԲ-ԱԱ-18/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 10.04.2018թ. ժամը 11-30-ին, ՀՀ քննչական կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5 հասցեում:

Նիստին մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ Ս.Պետրոսյանը, գնահատող հանձնաժողովի անդամներ Վ.Պետրոսյանը, Վ.Մկրտչյանը, Մ.Անտոնյանը, Է.Արշակյանը և քարտուղար Մ.Մուրադյանը:

1. Միաժամանակյա բանակցությունների մասին

«ՖԼԵԾ ՄՈՏՈՐՍ» ՍՊԸ –ն ներկայացրել է նոր գնային առաջարկ, համաձայն որի 5-րդ չափաբաժնի համար առաջարկել է 630000 / առանց ԱԱՀ՝ 525000/ՀՀ դրամ:

«ԱՐՊԱՆԻՎ» ՍՊԸ–ն ներկայացրել է նոր գնային առաջարկ, համաձայն որի 6-րդ չափաբաժնի համար առաջարկել է 155976 / առանց ԱԱՀ՝ 129980/ՀՀ դրամ:

Հանձնաժողովը որոշեց.

1.1 Ընթացակարգի **առաջին տեղ** զբաղեցրած մասնակից ճանաչել՝

1, 5 չափաբաժինների համար **«ՖԼԵԾ ՄՈՏՈՐՍ» ՍՊԸ** –ին,
3, 4, 6, 7, 8 չափաբաժինների համար **«ԱՐՊԱՆԻՎ» ՍՊԸ** –ին:

1.2 Ընթացակարգի **երկրորդ տեղ** զբաղեցրած մասնակից ճանաչել՝

3, 4, 7 չափաբաժինների համար **«ՌԻՆՈ » ՍՊԸ** –ին,
8 չափաբաժնի համար **«ՖԼԵԾ ՄՈՏՈՐՍ» ՍՊԸ** –ին:

2. ''Գնումների մասին'' ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն ընթացակարգի 2-րդ չափաբաժինը հայտարարել չկայացած:

3. Հաստատել ընթացակարգի 2-րդ չափաբաժինը չկայացած հայտարարելու մասին հայտարարության տեքստը(կցվում է):

4. Փաստաթղթերի գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրել ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի(այսուհետ՝ Կարգի) 43-րդ կետի 3-րդ և 4-րդ ենթակետերի համաձայն փաստաթղթերի ստացումից հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում, 12.00-ին, ՀՀ քննչական կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5 հասցեում:

Հանձնաժողովի քարտուղարին՝

1. Համաձայն Կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետերի՝ առաջին տեղեր զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ հարցում ներկայացնել ՀՀ ԿԱ ՊԵԿ,
2. Համաձայն Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետերի՝ ծանուցել առաջին տեղը զբաղեցրած մասնակիցներին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

Մասնակցում էին

Հանձնաժողովի նախագահ _____ Ս.Պետրոսյան

Հանձնաժողովի անդամներ՝ _____ Վ. Պետրոսյան

_____ Վ.Մկրտչյան

_____ Մ.Անտոնյան

_____ Է.Արշակյան

Հանձնաժողովի քարտուղար՝ _____ Մ.Մուրադյան